Գ. ՇԱԽԿՅԱՆ. Թումանյանի ընտանեկան աշխարհը, *Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2011, 232 էջ:*

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Շախկյանն ընթերցողի սեղանին է դրել իր տեսակի մեջ եզակի մի աշխատություն, որը կրում է «Թումանյանի ընտանեկան աշխարհը» խորագիրը: Մեր գրականագիտության, պատմագիտության մեջ դեռևս չէր ստեղծվել նման հիմնարար աշխատություն, որը ներկայացներ գրողներից որևէ մեկի ընտանեկան աշխարհը, ծագումնաբանական-ժառանգական այն կապերն ու շարունակական ընթացքը, որն ունեցել է Ամենայն հայոց բանաստեղծը:

Գյոթեն հանճարի «բնավորությունը» պեղելիս՝ կարևորել է նրա բնավայրն ու այն միջավայրը, որում ծնվել ու մեծացել է հանճարը, իր գրգիռները ձևավորել ժառանգական կողից և միջավայրից եկող ազդեցություններով: Բնաշխարհին փոխանցվող տիեզերական ներազդեցությունը յուրովի է արտացոլվում հանճարի էության և ստեղծագործության մեջ, նրան դարձնում ժառանգական կողի կրողը՝ այժմ արդեն որպես համահավաքն ու ամբողջականը:

Որտեղի՞ց է գալիս Թումանյանը, ի՞նչ կողի կրողն է նա: Պատմական այս ճշգրտություն և բանասիրական ընդհանրացում պահանջող հարցին պատասխանելու համար Գ. Շախկյանը, ով նույնպես թումանյանական շառավիղներից մեկի կրողն է, իր գիրքը սկսել է «Գերդաստանի արմատները» գլխով՝ այստեղ ներկայացնելով նրանց, ովքեր ձևավորեցին Թումանյանների նոր գերդաստանը: Թուման, Գոգչակ, Բարխուդար, Մեհրաբ, Հովակիմ, Հովհաննես աղա. ահա տոհմածառի սկիզբը, որի առաջին հետազոտողներից մեկը հենց Հովհաննես Թումանյանն է եղել: Զբաղված լինելով իր տոհմի ծագումնաբանական խնդիրներով՝ նա 1912 թ. դիմել է պատմաբան Լեոյին և խնդրել օգնել իրեն՝ հավաքելու նյութեր Թումանյանների ծագման վերաբերյալ: Թումանյանն արդեն ծանոթ էր Սանահնի վանքի ժամանակագիր Վարդան Օձնեցու թողած տեղեկությանը, որն ամփոփվել էր «Պատմութիւն» աշխատության մեջ: Այստեղ Օձնեցին առաջինն է, ով կցկտուր ենթադրություններ է անում այն մասին, թե Թումանյանները «առք լիցին ի նախարարաց սերնդաց հայոց»: Հովհաննես Թումանյանն իր ինքնակենսագրականում գրել է, որ իր տոհմը Լոռիում եկվոր է, այստեղ է եկել շատ վաղ ժամանակներում: Գ. Շախկյանը գիտական հետազոտման է ենթարկում ինչպես Օձնեցու Թումանյանի թողած տեղեկությունները, այնպես էլ ժամանակի մյուս մեծերի՝ Ավետիք Իսահակյանի, Ղազարոս Աղայանի վկայությունները, գիտական-համադրական սկզբունքով հասնում նյութի ճշմարիտ արտացոլմանը՝ վերջնականապես պատասխան տալով այն հարցին, որը փոքր-ինչ մակերեսորեն արտացոլվել է Թումանյանի կենսագիրների երկերում: Գրքի հեղինակը վստահորեն հայտարարում է, որ Թումանյանը սերում էր ազնվական տոհմից՝ Մամիկոնյաններից, նրանց շառավիղներից մեկի՝ Տերունի ժառանգներն են Թումանյանի նախնիները: Իսկ սրանում համոզվելու համար Շախկյանը հիշատակում է նաև այն, որ Թումանյանները Դսեղում կոչվել են նաև Տերսանք, այսինքն՝ Տերունի հետնորդներ:

Նախնիներին համակողմանի անդրադարձ կատարելուց հետո ուսումնասիրողն արդեն հետազոտության նյութ է դարձնում Թումանյանի ընտանիքը՝ գրքի երկրորդ գլուխը սկսելով բանաստեղծի հորից՝ Տեր Թադևոսից, ով Հովհաննես աղայի անդրանիկ զավակն էր, մկրտության ավազանի անունով՝ Ասլան: Ծնվել էր 1839 թվականին, ուսանել Սանահնի վանքում, ապա, մի կողմ թողնելով իր ազատատենչությունն ու անհաշտ վերաբերմունքն այն ամենի հանդեպ, ինչը բռնադատում էր մարդու հոգին, ձեռնադրվել քահանա: «Նա ինչպես

մի փառահեղ ապարանքի ամենալավ բեկորը, բարձր կանգնած էր մեր վայր ընկած ցեղի մեջ, և մեր ամբողջ ցեղը դեպի նա տածում էր որդիական հարգանք – իբրև իրան նահապետի, ինչպես եկել էր որդոց որդի»,– հոր մասին գրել է Հովհ. Թումանյանը: Գրքի հեղինակն անդրադարձել է Թումանյանի մորը՝ Սոնային, Քոչարյանների տոհմից սերված հայ կնոջը, ում կերպարը մշտապես ուղեկցել է բանաստեղծին, դարձել ներշնչանքի աղբյուր: Թումանյանի մայրական քնարերգությունը հարուստ չէ, ինչպես Իսահակյանինը, սակայն բանաստեղծն ապրել է մոր կերպարով, ամեն անգամ Դսեղ գալիս՝ գորովանքով վերաբերվել մորը: Թումանյանը մորը համեմատել է սարի պախրայի ու եղջերուի հետ՝ սարերի հանդեպ իր մեծ սերը պայմանավորել մորով: Երկար է ապրել բանաստեղծի մայրը՝ 94 տարի, նա տեսել է որդու մահը, սգացել... Գ. Շախկյանի գրքում առաջին անգամ ամբողջականորեն ներկայանում են Թումանյանի եղբայրներն ու քույրերը՝ Ռոստոմը, Օսանը, Իսկուհին, Վահանը, Աստղիկը, Արշավիրը, Արտաշեսը: Գիտական բարեխղճությամբ, փաստական նյութի համադրումներով, նաև սեփական դիտարկումների շաղախումներով է ներկայացնում Թումանյանի եղբայրներին ու քույրերին գրքի հեղինակը, հիշատակում նրանց զավակներին, որոնց մեջ քիչ չեն նշանավոր մարդիկ:

Գ. Շախկյանն առանձին գլուխ է նվիրել Թումանյանի բազմանդամ ընտանիքին, նրա զավակներին, մանրամասնորեն ներկայացրել նրանց ճակատագրերը, նրանց շառավիղներին: Այստեղ արդեն համադրվել են հայրենագիտականն ու պատմականը, բանասիրականը: Հատկապես այս գլուխը, ուր Թումանյանը ներկայացվում է ընտանեկան միջավայրում՝ իր զավակների հետ, ճանաչողական մեծ արժեք ունի: Այստեղ հառնում է ծանոթ-անծանոթ Թումանյանը, մենք տեսնում ենք իր զավակներին նվիրված հորը: Շախկյանը բազմաթիվ հուշագրություններից, նամակներից քաղվածքներ է կատարել, իր նյութը հագեցրել բազմաթիվ փաստարկումներով՝ այսպես ստեղծելով Թումանյանի ընտանեկան կյանքի հանրագիտարանը: Ռուս իրականության մեջ այսպիսի բարեխղճությամբ և համակողմանիությամբ միայն Լև Տոլստոյի ընտանիքն է հետազոտվել, հայ իրականության մեջ այս ավանդույթը ձևավորում է Գ. Շախկյանը՝ այսպես մեծացնելով իր հետազոտության արժեքն ու նշանակությունը:

Այս գլխում հետազոտողը հատկապես հենվում է նորահայտ փաստերի վրա, սեփական որոնումների արդյունքում ձեռք բերված նյութերը մատուցում սիրով ու նվիրվածությամբ՝ պահպանելով շարադրանքի գիտականությունը:

Գրքի վերջին գլխում Թումանյանի մերձավորագույն բարեկամների և բանաստեղծի տուն-թանգարանների մասին պատումներն են, որոնք նույնպես հիմնականում հենվում են սեփական որոնումների և հայտածումների վրա:

Գ. Շախկյանի «Թումանյանի ընտանեկան աշխարհը» գիրքը դասագիրք է հայրենիքի և Սփյուռքի դպրոցների համար, հայագիտությամբ զբաղվող կենտրոնների համար, քանզի այստեղ հեղինակը չափազանց հարուստ նյութ է ներկայացնում, անդրադառնում է հուշարձաններին՝ կատարելով հայրենագիտական-երկրագիտական լուրջ հետազոտություն, իր գիրքը հագեցնում է լուսանկարներով և ազգային կերպարվեստի մեծերի ստեղծագործությունների վերատպություններով, ներկայացնում հարուստ բնաշխարհ՝ իր զարմանալի բանաստեղծական պոռթկումներով, իրենից ճառագող լույսով ու ջերմությամբ:

ԼԵՎՈՆ ՄՈՒԹԱՖՅԱՆ